ՆՈՒԱԳՆԵՐ

Մարգարէ չեմ—դուշակում եմ՝
Խաղ ես խաղում դու ինձ հետ.
Ուզում ես դու սիրաս վառես,
Որ ծիծաղես այնուհետ։
Որ հրճուանքով նայես հեռուից
Սրտիս բուռը հրդեհին,
Նայես հեռուից դու խնդալով
Լալահառաչ քո զոհին։
Օ՛, մի լինիր Ներոնի պէս
Զարախնդաց ու դաժան.
Գեղեցկուհուն չարութիւնը
Ոչ վայել է, ոչ արժան։
Թէ ուզում ես՝ գեղութիւնդ
Մնայ անբիծ, անարատ,—
Ինձ մի ստիպիր, որ ես ի դուր
Ողբամ դառը, լուսահատ։

*

Քեզ ինչ օգուտ, երբ քո սիրուց.
Ես հառաչեմ վշտաբեկ.
Քեզ ինչ հաճոյք, երբ դառնագին.
Ցանջուեմ դիշեր ու ցերեկ։
Իմ երդմով ես դուցէ ուզում
Գեղութիւնդդ հաշակել.
Իմ վէրքովն ես դուցէ ուզում
Փառք ու պատիւ վաստակել։
Մթէ թշուառ բանաստեղծի.
Ցաւատ սրտի տանջանքը
Պիտի լինի գեղեցկուհու
Անգութ սրտի պարծանքը։

Աղաչում եմ, դու մի լինիր
Այդքան անգութ, անափառ.
Իմ քնարի հնչիւնները
Խաղալիք չեն քեզ համար։

*
* *

Բանաստեղծը պիտի լինի
Ժողովրդի թարգմանը.
Բանաստեղծը պիտի լինի
Հայրենիքի պատգամը։
Վշտի ժամին իր ազգի հետ
Նա դառնագին պիտի լայ.
Իսկ երջանիկ բոպէներին
Պիտի ուրախ նա ժպտայ։
Օ՛ ինչ ծաղր, օ ինչ ծանակ
Պիտի նիւթեմ ինձ համար,
Եթէ մոռնամ ժողովուրդը,
Սէրըդ երգեմ վշտահար։
Բաւական է. գեղութեամբդ
Ինձ մի անիր նըշաւակ.
Գեղութեամբդ մի դարձնիր ինձ
Հայրենիքի խորթ զաւակ։

*
* *

Աղաչում եմ, օ խնդրում եմ,
Հեռու գնա իմ սրտից.
Քո գեղութեան ես նայելով՝
Սարսափում եմ սև մտքից։
Թէ իմ սրտում գտնես մի կայծ
Եւ դու նորան բորբոքես.
Թէ իմ սրտում վաղուց հանգած
Դու հրդեհը նորոգես.
Այն ժամանակ թող իմ սիրտը
Հոսեն բոլոր ծովերը.
Թող իմ սիրտը հոսեն բոլոր
Ովկիանի ջրերը։
Թող երկնքից թափուի լանկարծ
Մի լորդառատ, մեծ հեղեղ

Եվ իմ արտասուքը զարհուրանքներով
Հրդեհը մեջ և անհաղ...

***

Մի զարմանար, եթէ ընկճուիմ
Թոյլ եղէգի նման,
Բուռը սիրոյ փոթորիկից
Ինչեմ սառը դերեզման։
Շատերին եմ քեզնից առաջ
Սիրել, իբրև խելագար.
Շատ անգամ է քեզնից առաջ
Տանջուել սիրոյս ցաւագար։
Բայց այս անգամ կը մահանամ
Սիրոյ դաւը տանջանքից,
Որովհետև վարդերի մէջ
Դու չքնաղ ես ամենքից։
Ա՛խ, երանի դու լինէիր
Անշուք մի կոլս զառամած.
Կամ լինէիր դու մի անհոտ,
Վայրի ծաղիկ թառամած...

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ